

9303



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երզնկա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«27» 08 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 167 - 24

Նախաձեռնող՝

«ԷՅ ՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ք. Երևան Նոր Նորք վ/շ. Զուղայի փ. 2.4, բն.49

Գործունեությունը՝

Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի 49-րդ փողոցի  
65 հասցեում բնակելի թաղամասի կառուցում  
Կտրայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 167 - 24

«24» 08 2024թ.

**Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի 49-րդ փողոցի 65 հասցեում  
բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվեկարգություն**

Նախաձեռնող՝	«ԷՅ ՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Հաշվետվություն/նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք

**Ներածական մաս.** «ԳԼՈՒԲԱԼ ՌԻԸԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ-ն նախատեսում է գ. Ջրվեժի 49-րդ փողոցի 65 հողամասում «ՍՄԱՐԹ ՍԻԹԻ 3» բնակելի թաղամասի կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 23052023-07-0020, ծածկագիրը՝ 07-057-0314-0098 և Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը՝ N 181, տրված՝ 2023 թվականի սեպտեմբերի 27-ին:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Համաձայն ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների եզրակացության՝ տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է գրունտների 3 շերտով: Տեղամասում ստորերկրյա գրունտային ջրերը ըստ արխիվային նյութերի գտնվում են 40 մետրից ավելի խորը հորիզոններում: Ֆիզիկատեխնիկական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներատեխնիկական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:



**Նկարագրական մաս.** Հողատարածքը գտնվում է բնակելի տների և «ՍՄԱՐԹ ՍԻԹԻ 1,2» բնակելի թաղամասերի հարևանությամբ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.5868 հա: Նախատեսվում է կառուցել բնակելի թաղամաս՝ 5 հարկանի (#1, #2) և 4 հարկանի (#3, #4) երկուական բազմաբնակարան շենքեր: 5 հարկանի շենքերի 0,00 նիշից ցածր տարածքում նախատեսված է ավտոկայանատեղիներ:

Շենքերի մուտքերը նախատեսված են բակի կողմից: Շենքերի երեսապատումը նախատեսված է բազալտե, տուֆե և տրավերտինե սալիկներով: Նախագծում հակահրդեհային անվտանգության միջոցառումները իրականացված են համապատասխան ՀՀ-ում գործող նորմերի: Բնակելի թաղամասի կառուցման շինարարական աշխատանքներում օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քարեր, փայտ, մետաղ, ապակի, սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութ, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն: Նախատեսվում է յուրաքանչյուր շենքի տանիքին տեղադրել 4կվտ կայան, շենքերի մուտքերի և տարածքի բակային լուսավորությունը ապահովելու համար: Արևային էներգիան կօգտագործվի ֆոտովոլտային սարքավորումների միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության և բնակելի թաղամասի կարիքների օգտագործման համար:


Նախագծով նախատեսված հրդեհային ազդարարման և տեսահսկման մասեր, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցերի, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխությանն համակարգերի ինժեներական լուծումները նախատեսված են տրամադրված տեխնիկական պայմանների և ՀՀ շինարարական նորմերի համաձայն: Շահագործման փուլում համալիրն ապահովված է լինելու ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար կառուցվելու են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ, վերելակ:

Նախագծում հակահրդեհային անվտանգության միջոցառումները իրականացված են համապատասխանում են ՀՀ-ում գործող նորմերին: Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են: Նախագծի կոնստրուկտորական մասը մշակված է մոնոլիտ երկաթբետոնե կոնստրուկցիաներով:

Բնակելի համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 5868 մ<sup>2</sup>,
- համալիրի կառուցապատման մակերես՝ 1815 մ<sup>2</sup>,
- ընդհանուր օգտագործման ճանապարհներ, մայթեր՝ 1672 մ<sup>2</sup>,
- կանաչապատ գոտի-խաղահրապարակներ՝ 2,382 մ<sup>2</sup>,
- ավտոկայանատեղիների քանակ՝ 54,

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական





սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փոում՝ վառելիքի կամ քայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական աշխատանքերի ժամանակ ընդհանուր հողային աշխատանքների ծավալը 1900 խմ է, հետլիցքը՝ 1350 խմ: Ավելացած հողային զանգվածը, որը կազմում է 550 խմ կօգտագործվի տարածքում նախատեսվող խաղահրապարակի բարեկարգման, հարթեցման և նիշերի ապահովման համար: Ազդեցության ենթակա բուսահողը կհեռացվի և կպահվի տարածքում: Հետագայում բուսահողի նշված զանգվածը կօգտագործվի բնակելի թաղամասի կանաչապատման աշխատանքներում: Թփերն և ծառատեսակներն տնկելու և նրանց կաչողականությունն ապահովելու համար նախատեսվում է ձեռք բերել 100 խմ սևաող, որը տրամադրվելու է համայնքի կողմից, և համապատասխան քանակությամբ տորֆ և կարմիր ավազ: Նշված 100 խմ սևաող մինչ շինարարական աշխատանքների ավարտը պահեստավորվելու և հետագայում օգտագործվելու է կանաչապատման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանան շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է՝ 13-15 խմ, և շինարարական աղբը՝ 10 խմ: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները և մնացորդային հողային զանգվածը նախատեսվում է տեղափոխել Ջրվեժի համայնքապետարանի կողմից նախապես համաձայնեցված թափոնների աղբավայր:

Հայտում ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման գործողություններ՝ ստուգելու շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվող մեղմացնող միջոցառումների համապատասխանությունը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, մասնավորապես կանաչապատման համար կօգտագործվի՝

- Դեկորատիվ ակացիա – 40 հատ
- Կանադական բարդի – 160 հատ
- Կանադական կարմիր տեսակի բարդի – 20 հատ
- Եղևնի – 20 հատ
- Դեկորատիվ տուա – 25 հատ
- Կլյոն – 7 հատ
- Մրգատու ծառեր (կեռասենի, սալոր, դեղձ, ծիրանենի, խնձորենի) – 240 հատ
- Վարդ – 100 հատ





- Մարժնիք – 10 հատ
- Սամշիթ – 30 հատ
- Մարգախոտ

Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցի միջոցով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:


Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- Շինհրապարակում իրականացնել փոշեգոյացնող աշխատանքների պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Համալիրի կառուցման ընթացքում, շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO<sub>x</sub>) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտում վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կպչողականություն չափահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

**Պարճառաքանական մաս.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ քննարկումներն իրականացվել են Ջրվեժի համայնքապետարանում: Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում: Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն





թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Համալիրի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
2. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Ջրվեժի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծին համապատասխան:
3. Հողային աշխատանքների իրականացման ընթացքում սահմանել մասնագիտական հսկողություն՝ տարածքում հնարավոր կարմիրգրքյան բուսական և կենդանական տեսակների հայտնաբերման, պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության նպատակով՝ համաձայն գործող իրավակարգավորումների:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ջրվեժի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշման 43-րդ կետի՝ որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«ԳԼՈՐԱԼ ՌԻԸԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի 49-րդ փողոցի 65 հասցեում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման



հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Էլեն Մկրտչյան